ՆՎԻՐՎՈՒՄ Է ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՑԱՎԻ ՆԵՐՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ

Բնությունը միշտ էլ աշխարհ է բերում բնատուր շնորհներով օժտված մարդկանց, սակայն այդ շնորհառատ անձը հիրավի մեծ է դառնում, երբ նրա ծնունդն ու կյանքը համընկնում են բախտորոշ ժամանակի հատ։ Բախտ էր և՛ իրեն, և՛ ամենքիս համար, որ Վազգեն Առաջին Կաթողիկոսի գահակալության տարիները համընկան համեմատաբար բարի ժամանակների հետ, երբ Սուրբ Էջմիածնի վրայից ցրվում էին դժնդակ օրերում ծանրացած ամպերը և հնարավորություն էր ստեղծվում ցրվող մշուշի միջից տեսնել հայոց Մայր Տաճարի երկնառաք գմբեթները, տեսնել մեր ժողովրդի անցյալն ու ներկան և իմաստավորել, թե ինչ է եղել մեզ համար Եկեղեցին, հավատը։ Վազգեն Կաթողիկոսը այն երջանիկն էր, որ, լինելով ծնունդը իր ժամանակի, ինքն էլ իրենով, իր իմաստությամբ, աշխարհն ու շրջապատը հասկանալու, անհնարին պահերին հնար գտնելու իր երկնավոր կարողություններով ազդեց ժամանակի վրա, անհավատալիորեն լայնացրեց ու խորացրեց ժամանակի ընձեռած հնարավորությունները։ Եվ այս փոխադարձ տուրևառումը տվեց սքանչելի արդյունքներ, վերածնվեց Էջմիածինը, վերազարթնեց ժողովուրդը, խտացավ, մկանակալվեց Հայրենիք-Սփյուռք հյուսվածքը, հայության տեսիլը թևածեց ողջ հայ աշխարհում։

Հարկավոր էր լինել Վազգեն Կաթողիկոս, որպեսզի կարողանար աստվածամերժ գաղափարաբանության երկրում, պետության հսկող աչի առաջ, կառուցել նոր եկեղեցի՝ Սուրբ Սարգիսը, երևի միակ քրիստոնեական նորակառույցը Խորհրդային Միության տարածքի վրա։ Հարկավոր էր լինել Վազգեն Կաթողիկոս, որպեսզի եկեղեցի կառուցեր նաև մարդկանց հոգիներում, այն հոգիներում, որ դեռ մանկուց լցված էին զանազան իզմերով, ուր առաջնային էր նյութը, իրեղենությունը։

Հարկավոր էր լինել Վազգեն Կաթողիկոս, որպեսզի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դեպի իրեն ձգեր բոլորին ոչ միայն իր հնամենի ճարտարապետությամբ, իր բազմակի խորհրդով, այլ նաև իր անզուգական գահակալով, որի վեհաշուք տեսքը, մտքի թռիչքը, սթափ մտածողությունն ու լայնախոհությունը զարմացնում ու հմայում էր ամեն մի այցելուի՝ լիներ դա գերհզոր պետության տիրակալ, թե աշխարհահռչակ գիտնական, գրող, թե արվեստագետ, բանվոր, թե շինական։

Անչափելի է կորուստը՝ այն էլ այս ծանր, տագնապալից օրերում, երբ մեր ժողովուրդը այնքան շատ կարիքը ունի հոգևոր հենարանի, մի մաքուր ու ողջանվեր էության, որին կարողանա սիրել, հավատալ, ապավինել։ Սակայն մեծ մահերը, մեծ ցավը նույնպես ունեն ապրեցնելու զորություն արտադրելու ունակություն։ Թող Հայոց Վեհափառ Հայրեպետի կորստյան ցավը ներուժություն հաղորդի մեզ, շարունակի օգնել ու սատարել մեզ՝ դիմագրավելու ամենայն դժվարություն, շարունակի մաքրել ու ազնվացնել մեր հոգիները, որով ավելի դյուրին կդառնա նվիրումը Աստծուն, ազգին ու մարդկությանը։

ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
1908 – 1955 – 1994 թթ.



ՎԱՉԳԵՆ ՎԵՌԱՓԱՌԸ